



Այցելություն Վեստմինստերյան արքայություն

Հոկտեմբերի 28-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Գարեգին վրդ. Համբարձումյանը՝



որպես Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակության անդամ, մեկնեց Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, որտեղ՝ Վեստմինստերյան արքայությունում, Նորին Սրբության հանդիսապետությամբ տեղի ունեցավ



Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին նվիրված հիշատակի արարողություն:

Ճեմարանի Գիտական խորհրդի անդրանիկ նիստը

Նոյեմբերի 2-ին տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի նորընտիր Գիտական խորհրդի անդրանիկ նիստը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի: Գիտական խորհրդի գործառույթների մեջ է մտնում Գևորգյան հոգևոր ճեմարանի առաքելության և նպա-

տակների ճշտգրտումը, ինչպես նաև կրթական ոլորտի ռազմավարական



ծրագրերի մշակումն ու դրանց կյանքի կոչումը:

Ժողովն արձանագրեց, որ անհրաժեշտ է Գևորգյան հոգևոր ճեմարանի կրթական չափորոշիչները համապատասխանեցնել համաշխարհային հոշակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների չափորոշիչներին:

Ժողովն ավարտվեց Ս. Նաթան արք. Հովհաննիսյանի օրհնության խոսքով:

Չեխիայի կարդինալ Դոմինիկ Դուկան ճեմարանում

Նոյեմբերի 4-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Գարեգին վրդ. Համբարձումյանն ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն



Հայոց Կաթողիկոսի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ժամանած Չեխիայի կարդինալ, Պրահայի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Դոմինիկ Դուկային՝ ուղեկցությամբ Չեխիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Բարսեղ վարդապետ Փիլավյանի: Տեսուչ հայր սուրբը Նորին Սրբազնություն Դոմինիկ Դուկային ուղեկցեց Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսումնական մասնաշենքի շրջայցի ընթացքում



և ներկայացրեց ուսումնական հաստատության անցյալն ու ներկա դրությունը: Շրջայցի ընթացքում քննարկվեցին ճեմարանական կրթությանը վերաբերող մի շարք հարցեր: Հանդիպման ավարտին Նորին Սրբազնությունը Գարեգին վարդապետին նվիրեց Սբ. Վիտուսի պատկերով հուշամեդալ:

Ճեմարանական ֆուտբոլ

Նոյեմբերի 5-ը նշանավորվեց Գևորգյան հոգևոր ճեմարանում տեղի ունեցած ֆուտբոլի առաջնության եզրափակիչ խաղով՝ Ա. և Դ. լսարանների թիմերի միջև: Անզիջում պայքարի արդյունքում



հաղթեց Ա. լսարանի թիմը: Ճեմարանի տեսուչ Ս. Գարեգին վրդ. Համբարձումյանը հաղթանակած թիմին հանձնեց ֆուտբոլի ճեմարանի գավաթը:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒՄ Է ԳԻՏՆԱԿԱՆԸ

Մեր գրուցակիցն է գիտությունների թեկնածու, հոգեբան Հրաչ Հովհաննիսյանը, և գրուցի թեման է հոգեբանության ու կրոնի առնչությունները:



- Պարոն Հովհաննիսյան, ըստ Ձեզ, ո՞րն է հոգեբանի և հոգևորականի գործառույթների տարբերությունը:

Հոգեբանի և հոգևորականի աշխատանքի արտաքին կողմերը շատ նման են. երկուսն էլ մարդու ներքին հանգստության, ներդաշնակության ու հարմարվողության ապահովման համար են արվում: Սակայն շատ տարբեր են աշխարհայացքներն ու աշխատանքի մեթոդները: Աշխարհայացքային առումով հոգեբանը հետևում է գիտական հարացույցներին, հոգևորականը՝ կրոնականին: Գործնական հոգեբանի մեթոդները կոնկրետ տեխնիկաներ են՝ եղանակներ, որոնք իրենց ստույգ դասակարգումներն ունեն և կիրառվում են ըստ իրադրության, ըստ անձի անհատական առանձնահատկությունների ու հոգեբանի հայեցողության: Իսկ հոգևորականի մեթոդը ճշմարիտ ուղին ցուցանելն է՝ բացարձակ ճշմարտության ու հավատքի ներքո: Հոգեբանը «ճիշտ ու սխալի», «լավ ու վատի» մեկնություն չի անում, ի տարբերություն հոգևորականի, որը կարող է բառացիորեն դա անել և ուղղորդել մարդուն: Հոգեբանն ավելի շատ ճանապարհի ընտրության հնարավորություն է տալիս անձին, սատարում նրան՝ վեր հանելու և գործադրելու հոգեկանի պաշարները, իրեն զգալու համահունչ իր ներքին ապրումներում, մյուսների հետ համակեցության մեջ՝ հարմարվելու համար

տվյալ սոցիալական միջավայրին:

- Հոգեբանությունը՝ որպես գիտություն, մարդուն առաջնորդում է դեպի աստվածապաշտություն, թե՛ ընդհակառակը՝ վանում:

Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Այսինքն՝ հոգեբանությունը նպատակամիտված չէ մարդուն աստվածապաշտության առաջնորդելու կամ հակառակը: Աստվածապաշտությունն ի վերուստ մարդու ունեցած կրոնական զգացմունքն ու համոզմունքն է: Մարդն իր մեջ ունի ինչպես ինտելեկտուալ, գեղագիտական կամ բարոյագիտական զգացմունքներ, այնպես էլ կրոնական զգացմունք, որը հավատով է սոգորված՝ անկախ կրոնի մասին հատուկ պատկերացումներ ունենալուց: Ի դեպ, նույն հարցը կարելի է տալ ցանկացած գիտության կամ ուսմունքի, այդ թվում և աստվածաբանության ներկայացուցչի...

- Իր աշխատանքի մեջ հոգեբանի անձնական առաքինություններն ի՞նչ կարևորություն ունեն:

Հոգեբանի անձնական կերպարը, հոգեկերտվածքը, դաստիարակությունը մեծ նշանակություն ունեն իր գործնական հարաբերություններում, քանի որ մարդկանց վրա զգալի ազդեցություն ունի անձի հեղինակությունը և նույնիսկ՝ խարիզման, որովհետև հոգեբանի աշխատանքում խնդիրների լուծումը նաև հոգեբանի ներկայանալիությունով է պայմանավորված: Կարևոր է, թե ո՞վ է տվյալ մեթոդը կիրառում: Այս իմաստով հոգեբանի և հոգևորականի գործունեությունները շատ նման են: Բայց հոգևորականի համայնքային գործունեություն ծավալելը, ժողովրդական ելույթներ ունենալն ու քարոզ խոսելը որոշ տարբերություններ են մատնանշում:

Պարրասպրեց Սարգիս սրկ. Ավերիսյանը

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԱՍՏՎԱԾ

Հին Կտակարանում բազում են տեղիները, որտեղ հանդիպում ենք դաժան արյունահեղությունների, որոնք պատվիրվում են Աստծու կողմից: Առաջին հայացքից այս դաժանությունները հակակրանք են առաջացնում ընթերցողների մոտ: Սոցիալական հարցումները ցույց են տալիս, որ մարդիկ ամենաշատը չեն կարողանում կարդալ Հեսու Նավեի գիրքը՝ դրանում առկա արյունահեղությունների պատճառով: Նրանք չեն կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս Աստծու ընտրյալ ժողովուրդը կարող էր կոտորել ազգեր, այն էլ՝ Աստծու պատվերով:

Հեսուի գրքում նկարագրվում է, թե ինչպես Հեսուն գրավեց Մակեդոն քաղաքը, սրի քաշեց բնակիչներին ու նրա թագավորին և ոչ մի ազատված կամ փախստական չմնաց (տես Հեսու Ժ 28-30): Աստվածաշնչում այս ամենը ներկայացվում է ռազմական փառաբանման լույսի ներքո, մինչդեռ այդ երևույթն այսօր կոչվում է «ցեղասպանություն», և դատապարտվում Ժնևյան օրենքներով: Բայց մի՞թե այն դատապարտելի էր Հեսուի և նրա ժամանակաշրջանի ամբողջ Մերձավոր Արևելքի համար: Որպես օրինակ՝ նմանատիպ մի տեսարան նկարագրվում է նաև Ասորեստանի արքա Աշուրնազիրպալ Երկրորդի վիճակագրության մեջ, որտեղ նա նկարագրում է իր ռազմական փառքը. «Շատ քաղաքներ ես պաշարեցի և գրավեցի, վեց հարյուր մարտիկների ես սրի քաշեցի, երեք հազար գերյալների ես այրեցի խարույկի մեջ...»: Այսպես կարելի է շարունակել այս դաժան տեսարանների նկարագրությունը, որը մեր աչքին Աշուրնազիրպալին կդարձնի սերիական մարդասպան: Այս և այլ վիճակագրություններից ու պատկերներից պարզ է դառնում, որ այդ ժամանակաշրջանում թագավորների և զորավարների դաժանությունը նորմալ էր համարվում, և բարձրացնում էր նրանց վարկը:



Այն, որ այդ ժամանակաշրջանի համար այս ամենը հասկանալի և անգամ գովելի էր, պարզ է, սակայն ինչի համար էր հարկավոր, որ մարդկությունը սիրող և մարդու փրկության համար իր Որդուն անգամ զոհող Աստված պատվիրեր այդ ամենը. չէ՞ որ նա մարդուն իր պատկերով ստեղծեց, ապա ինչպե՞ս է պատվիրում կոտորել:

Բանն այն է, որ շատ ժամանակ գավթոդներն իրենք էին ծուլվում գերյալների հետ՝ նրանցից յուրացնելով ողջ մշակույթն ու կրոնական արժեհամակարգը: Իսկ Քանանի կամ Մակեդոնի պարագայում Աստված չէր կարող այդ թույլ տալ, քանի որ նպատակ էր դրել ստեղծելու մի ժողովուրդ, որը պիտի սրբությամբ ապրեր, և չէր կարող թույլ տալ, որ խրախելացիները, ծուլվելով քանանացիներին, վերջիններիս կռապաշտությունը սովորեն: Թերևս անհավատալի թվա, բայց Աստված հրամայում էր ոչ թե ցեղասպանություն գործել, այլ վերացնել կռապաշտությունը, որն խրախելացիներն իրականացրին կռապաշտներին վերացնելու իմաստով: Բացի պարզ կռապաշտությունից, որն ընդունելը կամ մերժելն այսօրվա մարդու համար անձնական հարց է,

Քանանում կիրառվում էին մի շարք սարսափելի ծիսակատարություններ, որոնց ընթացքում կատարվում էին մարդկային զոհաբերություններ. նրանք զոհաբերում էին սեփական երեխաներին ու մասնակցում սեռական բնույթի խնջույքների: Ժամանակակից հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ պարզվել է, որ Մակեդ քաղաքում կար մի սովորություն, ըստ որի, քաղաքի հիմքերը դրվում էին արքայի անդրանիկ որդու վրա, իսկ պարիսպները՝ կրտսերի: Ահա այս հեթանոսական սովորություններն էին, որ չէր հանդուրժում Աստված (հետաքրքիր է, որ երկրի երեսից տարբեր ժամանակներում վերացել են ժողովուրդներ, քաղաքներ ու հասարակարգեր, որոնց կրոնական ծեսերում կիրառվում էին մարդկային զոհաբերություններ, և այդ ժողովուրդներին, որպես կանոն, վերացրել են ուրիշ ժողովուրդներ):

Ամեն դեպքում, մենք մարդկության պատմությունը դիտարկում ենք որպես ճանապարհ. Աստված մարդկության փրկության իր ծրագիր էր իրականացնում՝ ստեղծելու սուրբ ժողովուրդ, միայն ճշմարիտ Աստծուն պաշտող հասարակություն. Քանանի դեպքերն այդ ծրագրի իրականացման մի փուլն էին:

Պատրաստեց Հարություն սրկ. Քեշիշյանը

ՔԱՌԱԴԵՍ ԿԵՆԴԱՆԻՆ



Հնագույն արևելյան ժողովրդական պատկերացումներում երկրի չորս կողմերի պահապաններ համարվել են հրեշտակակերպ մարդը, առյուծը, եզր և արծիվը: Այս խորհրդանշական (symbolic) պատկերագրությունն ունի հետաքրքիր մեկնաբանություն: Հրեշտակակերպ մարդը (hominis) որպես սեր սփռող մեծ զորություն և ուժ, բնակվում էր ամենուր և ներդաշնակեցնում կյանքը, առյուծը (leonis) կենդանական աշխարհի զորեղ արքան էր և համարվում էր բնության վերակացուն, եզր (bovis) խոնարհ աշխատանքի խորհրդանշան էր, որի շնորհիվ էր իրականացվում մարդկային կեցությունը, իսկ արծիվը (aquilae) երկնքի և երկրի հսկողն էր, որ բարձունքներից հետևում էր բնության կարգուկանոնին:

Ըստ ավանդության՝ այս քառադեմ պատկերագրությունը վերագրվել է նաև Հիսուս Քրիստոսի կյանքը և վարդապետությունը ուսուցանող չորս ավետարանիչներին: Մատթեոսի խորհրդանշան է հրեշտակակերպ մարդը, որովհետև նա Ավետարանի սկզբում հիշատակում է Քրիստոսի մարդկային պատմությունը: Մարկոսի խորհրդանշան է համարվում առյուծը, քանի որ իր Ավետարանի սկզբում նա առյուծի համարձակությամբ հայտարարում է, թե Հիսուս Աստծու Որդին է: Ղուկասինը՝ եզր (զոհի խորհրդանշան), քանի որ Ավետարանն սկսվում է Ջաքարիայի՝ Տաճարում

զոհի պատրաստության պաշտամունքի նկարագրությամբ, իսկ Հովհաննեսինը՝ արծիվը, որովհետև նա Ավետարանի սկզբում

Քրիստոս այս քառադեմության կատարյալ մարմնացումն է: Նա ծնվեց և ապրեց երկրի վրա ինչպես հրեշտակակերպ մարդ, հաղթեց թշնամուն որպես առյուծ, ապա եզի զոհաբերության օրինակով իրեն զոհեց մարդկության փրկության համար և արծիվ պես հաղթականորեն երկինք սավառնեց:

Պատրաստեց Դավիթ դալիր Հունանյանը

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

Երբ մեկը մեզնից օգնություն է խնդրում, հաճախ միտք է ծագում, թե «Արժե նրան օգնել», - կամ, - «Իսկապես այս մարդը կարիքավոր է»: Որքան հաճախ ենք մենք հայտնվել այս դրության մեջ, որքան հաճախ ենք մենք այսպիսի մտածումների պատճառով երես թեքել օգնություն խնդրողից: Սակայն մի բան հստակ է. մենք դրված չենք որպես դատավոր ուրիշների կյանքի համար, այլապես մենք ոչ ոքի ողորմություն չենք տա: Եթե մեկն ուտելիք է խնդրում, ապա տուր նրան, թե ցանկանում ես, եթե չես ցանկանում, հրաժարվիր առանց քննելու, թե ինչու և նա աղքատ և դժբախտ: Ի վերջո այդ կարիքավոր մեզ պես Աստծո զավակ է, որն այդ պահին դժվար կացության մեջ է հայտնվել, և մեզնից ոչ ոք ապահովագրված չէ նման փորձությունից: Եթե մենք կարողանանք մեզ պատկերացնել շատ ավելի հեշտ օգնության ձեռք երանի է տալիս հոգով աղքատներին, աղքատությունից միայն նրանով, որ թե գումարի, հացի կամ հագուստի, այլ եթե մենք օգնության ձեռք չենք մեկնում ենք ակնկալում, որ Աստված ձեռք այսպես, լինենք ողորմած, որպեսզի եթե ոչ աղքատների համար, այլ Տիրոջից ողորմություն ստանալու հույս

Ողորմություն անելու ճանապարհին ֆինանսական դրությունն է: Ամեն ասելով. «Եթե ես հարուստ լինեի, հիմա ես չեմ կարող ինձ ողորմություն նույնիսկ չափազանց կարիքավոր ես, քեզնից խնդրում են, ամեն դեպքում էլ, եթե դու տաս գունե երկու լումա, դու ամեն բան կատարած կլինես: Եթե նույնիսկ մի կտոր հացովդ կիսվես, չունենալով քեզ մոտ ուրիշ ոչինչ դրանից բացի, դու ամեն բան արած կլինես: Գթություն կարելի է անել ըստ կարողության և ցանկության: Եթե մեկը չունի կարողություն և ունեցվածք՝ կարոտյալների առատաձեռն օգնելու, թող այնքան տաս, որքան կարող է: Պարզ է, որ ողորմության խափանման պատճառով ժամանակիս աղքատությունն է, բայց Աստված մեզնից ավելին չէ, որ պահանջում է, այլ՝ կամքի հոժարությունն ու հնարավորը: Եթե աղքատների կարոտությունն ամբողջովին բավարարել չենք կարող, մի պատառի և բաժակի կարոտ չթողնենք նրանց (Սբ. Եղիշե վրդ.):



կարիքավոր մարդու կարգավիճակում, կմեկնենք կարոտյալին: Տեր Հիսուս որը տարբերվում է նյութական հոգով աղքատները կարիքն ունեն ոչ կարիքն ունեն Աստծո ներկայության: նրան, ով մեզնից խնդրում է, ինչպես կմեկնի մեզ, որ իր կարիքն ունենք: Եվ մենք ինքներս գտնենք ողորմություն: ինքներս մեզ համար, որպեսզի ունենանք:

մյուս մեծ խոչընդոտը մեր անգամ մենք մեզ արդարացնում ենք կօզնեի բոլոր աղքատներին, բայց թույլ տալ»: Անհեթեթություն: Եթե դու կարիքավոր նույնիսկ նրանցից, ովքեր

Առաքյալի հրամանով պատվենք ծերերին և հոգ տանենք նրանց մասին (Ա Թեսաղ. Ե 12) և խնամենք տկարներին՝ մեր

կարողության չափով հսկելով և նրանց պետքերը հոգալով: (Սբ. Ներսես Շնորհալի): Մեր գթասրտությունը մեզ համար թող հայելի լինի, որպեսզի նրանում ինքներս մեր մեջ տեսնենք նմանությունը և ճշմարիտ կերպարը, որ կա Աստծո էության մեջ:

Պատրաստեց Ալբերտ Ավագյանը

ՈՐՆ Է ՃՇՄԱՐԻՏ ՍԵՐԸ

Քրիստոնեական կրոնի ամենակարևոր և առանցքային գաղափարն է սերը, առանց որի անհնար է հասկանալ կյանքն ու աստվածային ճշմարտությունները:

«Բայց արդ մնում են հավատք, հույս, սեր. սրանք երեքը և սրանցից մեծագույնը սերն է» (Ա Կորնթ. ԺԳ 13): Քրիստոնեական սերն այն մաքուր, անշահախնդիր զգացմունքն է, որը ստիպում է մարդուն իր ունեցած լավագույնը տալու ուրիշին, հոգալու, խնամելու, ցավելու դիմացինի համար՝ առանց որևէ սպասելիքի:



Սիրո կենսատու աղբյուրն Աստված է, ումից ստանում ենք այն: Եվ մեր ներսից դուրս հանելով՝ ուղղում ենք տարբեր մարդկանց՝ ընկերներին, ծնողներին, երեխաներին և այլն: Սակայն շատ կարևոր է իմանալ, թե ո՞րն է այն առաջնային նշանակետը, որին պիտի ուղղվի այդ ազնիվ զգացմունքը: Եթե սերը ստանում ենք Աստծուց, ուրեմն շատ բնական է, որ առաջինը հենց Աստծուն պիտի ուղղենք այն՝ հաճախ աղոթելով, Սուրբ Գիրք ընթերցելով, առօրյա կյանքում աստվածային պատվիրաններին հետևելով: Իստեղծված ամենամեծ պատվիրանի մասին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծ և առաջին պատվիրանը. և երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մտ. ԻԲ 39):

Քրիստոնյա մարդու համար ամենակարևոր սկզբունքը սեփական անձը ուրիշի անձին հավասարեցնել կարողանալն է: Ինչպես կարող ենք վայելել Աստծո սերը և ողորմությունը, եթե չենք սիրում մեզ նմաններին, որոնք նույնքան Աստծո որդիներ են, որքան և մենք: Իսկապես, եթե չենք սիրում մեր ընկերոջը, մեր եղբորը, եթե թշնամությամբ, և որ ավելի վատ է, անտարբերությամբ ենք լցված մեր նմանի նկատմամբ, ինչ իրավունքով է, որ Աստծո որդիներ կամ քրիստոնյաներ պիտի կոչվենք: Եթե հոգու խորքում ձգտում ունենք իսկական քրիստոնյաներ լինելու, Աստծո հաճությանը և ողորմությանն արժանանալու, ուրեմն պիտի լցվենք աստվածային անսպառ սիրով, ինչը պետք է արտահայտվի մեր առօրյա կյանքում, մեր ամեն մի գործի մեջ:

Եթե չարությամբ և ատելությամբ լցվենք մեր եղբոր կամ ընկերոջ նկատմամբ և ասենք, թե սիրում ենք Աստծուն, կստենք, քանի որ, եթե չենք սիրում մեր եղբորը, որին տեսնում ենք և ճանաչում, ապա ինչպես կարող ենք սիրել Աստծուն, որին երբեք չենք տեսել... (Ա Հովհ. Դ 20):

Պատրաստեց Եփրեմ Եփրեմյանը

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Քրիստոնեական ընտանիքում գլխավորը սիրո առկայությունն է թե՛ Աստծո և թե՛ միմյանց նկատմամբ: Ըստ Աստծո հրամանի. «Աճեցե՛ք և բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը և տիրեցե՛ք դրան» (Ծննդ. Ա 28), մարդիկ այսօր էլ ամուսնանում են և ընտանիք կազմում, սակայն, ցավոք սրտի, միշտ չէ, որ կազմված ընտանիքներն իրոք քրիստոնեական են: Անառարկելի փաստ է, որ հասարակության մեջ այդքան հաճախակի դարձած ամուսնալուծությունների, ընտանեկան բռնության և նմանօրինակ այլ երևույթների պատճառը սիրո բացակայությունն է:

Սերը ոչ միայն ընտանիքի, այլև առհասարակ քրիստոնյայի կյանքի առանցքն է: Մեզ համար չկա երջանկություն, եթե չկա հաղորդակցություն Աստծո հետ, իսկ Աստծո հետ հաղորդակցությունը սիրո միջոցով է, այն սիրո, որ Նա տաճում է մեր նկատմամբ, ու մեր անկեղծ և անշահախնդիր սիրո՝ Աստծո նկատմամբ: Թվում է՝ ինչ կապ ունի այս ամենի հետ ընտանիքը կամ ամուսնությունը: Իհարկե, կապ ունի: Պողոս առաքյալը, ամուսնական հարաբերությունների մասին խոսելիս, ասում է. «Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և Եկեղեցու վերաբերյալ» (Եփ. Ե 32): Սա պետք է հասկանալ այն իմաստով, որ տղամարդու և կնոջ սերը, որն ընտանիքի հիմքն է, պատկերն է և նմանությունը աստվածային սիրո, ինչպես որ ինքը՝ մարդը, պատկերն ու նմանությունն է Աստծո: Ինչպես Աստված սիրում է մարդկությունը, սիրում է՝ իր կյանքը մեզ տալու աստիճան, այնպես էլ պետք է սիրի ամուսինը իր կնոջը, կինն էլ՝ իր ամուսնուն: Պետք չէ այստեղ սերը շփոթել սիրահարության հետ. խոսքը սիրահարության մասին չէ, այլ սիրո՝ գիտակցված, վստահության և պատասխանատվության զգացումով ամրացած:



Քրիստոնեական ընտանիքը Եկեղեցու մանրակերտն է, և միևնույն սերը, որ կա Եկեղեցում, որով գործում է Եկեղեցին, պետք է լինի նաև ընտանիքում:

Պատրաստեց Սպարդակ սրկ. Իսրայելյանը

